



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2017 թ.

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍՍՄԱԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Ձեր 09.02.2017թ. թիվ 59 գրությամբ.

Հարգելի պարոն Սաքունց

ՀՀ Լոռու մարզպետարանում քննարկվել են Ձեր գրությունում բարձրացված հարցերը, որոնց կապակցությամբ տեղեկացնում եմ.

6.4 ա/Շուրջօրյա խնամքի կարիք չունեցող հիվանդների համար կարողությունները գնահատվել են Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսերի բժշկական անձնակազմի, տնօրենի՝ մարզի գլխավոր հոգեբույժի կողմից բանավոր կարգով: Գնահատման գրավոր արդյունքներ չկան:

6.5.Քննարկվել են հոգեբուժական ծառայության ռազմավարության մեջ առաջարկվելիք փոփոխությունները՝ Վանաձոր քաղաքի պոլիկլինիկաներում համապատասխան կաբինետների ձևավորման նպատակով, սակայն համապատասխան մասնագետ կադրերի պակասը թույլ չի տալիս իրականացնել այդ առաջարկությունները:

Մասնագետ կադրերը ծանրաբեռնված ռեժիմով հոգեբուժական ծառայությունն իրականացնում են Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսերում:

6.6.Լոռու մարզում հոգեբուժական հիվանդանոցային և ամբուլատոր ծառայություններն իրականացնում է «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն, իսկ տարածաշրջանների բժշկական կենտրոնների հոգեբուժական կաբինետները դեռևս ներառված չեն դիսպանսերի կազմի մեջ:

ա/Լոռու մարզում հոգեկան առողջության կենտրոններ ստեղծելու հարցը չի քննարկվել, քանի որ ներկայումս չկա դրա անհրաժեշտությունը:

6.8.Երեխաների և դեռահասների հոգեբուժական ծառայությունն ի գործ է իրականացնել «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ն: Առաջարկություններ չեն ներկայացվել:

7.1. ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկին

հավանություն տալու մասին» թիվ 15 արձանագրային որոշման թիվ 2 հավելվածի 7-րդ նպատակի 1-ին կետով նախատեսված է մշակել և իրականացնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար շուրջօրյա խնամքի տան փորձնական ծրագիր: Ինչպես և նախատեսված էր, Սպիտակում քաղաքում ստեղծվել է հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց համար շուրջօրյա խնամքի տուն (մինչև 16 անձանց համար), ովքեր ի վիճակի են ապրելու անկախ և համայնքում:

Ծրագրի շարունակականության դեպքում Լոռու մարզի այլ համայնքներում համայնքահեն ծառայություններ ներդրելու նպատակով մարզպետարանը հայտնում է է իր պատրաստակամությունը՝ տրամադրել համապատասխան տարածքներ:

2016թ. հունիսի 1-ից Սպիտակի խնամքի տունը սկսել է իր գործունեությունը. հանրապետության հաստատություններում խնամվողների շրջանում իրականացված գնահատումից հետո Սպիտակի խնամքի տուն են տեղափոխվել շահառուները՝ առաջնահերթությունը տրվել է համայնքի և մարզի բնակիչներին:

Լոռու մարզպետարանի և Սպիտակի քաղաքապետարանի աջակցությամբ խնամքի տանը անվարձահատույց տրամադրվել է մոտ 400 քմ տարածք Սպիտակ քաղաքի Իտալական թաղամասում, որի վերանորոգման և կահավորման աշխատանքներին ակտիվորեն մասնակցել է նաև Սպիտակի քաղաքապետարանը՝ տարածքը լիովին համապատասխանեցնելով մինչև 16 հոգու համար նախատեսված խնամքի տանը ներկայացվող պահանջներին:

7.3 կետով նախատեսված գործողություններին՝ մոդելի վերամշակման և ՀՀ-ում ներդրման կարողությունների գնահատման աշխատանքներին ներգրավված է նաև Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը: Այդ աշխատանքերը, կապված փորձնական ծրագրի ժամկետից ուշ սկսելու հետ, նոր են սկսվում:

Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարությունը և ՀՀ Լոռու մարզպետարանը մշտական հսկողություն են իրականացնում և գործուն աջակցություն ցուցաբերում հիմնախնդիրների լուծման հարցում:

2015թ.-ին ՀՀ առողջապահության նախարարի հրամանով իրականացվել է մշտադիտարկում հոգեբուժական կազմակերպություններում, նույնը շարունակվել է 2016թ.-ին: ՀՀ առողջապահության նախարարը բազմիցս հրավիրել է խորհրդակցություններ և քննարկումներ հոգեբուժական ծառայության պատասխանատուների հետ և, շնորհիվ այս միջոցառումների՝ զգալիորեն բարձրացվել է մատուցվող ծառայությունների որակը:

Հոգեբուժական հաստատությունում արտահիվանդանոցային և հիվանդանոցային օգնությունը իրականացվում է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի, ենթաօրենսդրական և իրավական այլ ակտերի համաձայն, որոնք բացառում են անձի իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները, հոգեբանական, ֆիզիկական ճնշումները և բռնությունները: Իրավական աջակցության, իրավունքների պահպանման ոլորտում մեծ դեր են կատարում Հանրային պաշտպանի ինստիտուտը, դատարանները, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, իրավապաշտպան կազմակերպություններ, և այլ պետական և ոչ պետական կառույցները:

ՄԱՐԶՊԵՏ



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ